տանվեց, թե մտադիր է դավաճանելու, դրա համար նա արտորվեց, իսկ Լարիսան նորից դարձավ Սեբաստիայի տուրման, և այդտեղի զորավար նշանակվեց Եվստաթիոսի որդի Լևոն Արդիրոսը, որ հետագայում դարձավ մագիստրոս և սխոլերի դոմեստիկոս։ Մելիասը գտնվում էր Եփրատիայում։ Երբ Խարսիանոնի դուքս նշանակվեց Կոստանդինը, վերոհիշյալ Մելիասը իջավ և գրավեց Լիկանդոս հին ամրոցը[54]։ Նա վերակառուցեց այն, ամրացրեց և այնտեղ հաստատվեց, իսկ քրիստոսասեր Լևոն կայսեր կողմից [Լիկանդոսը] դարձավ կլեյսուր։ [Մելիասը] այնուհետև Լիկանդոսից անցավ Ցամանդոսի[55] լեռը և այնտեղ կառուցեց մինչև օրս գոյություն ունեցող ամրոցը։ Այն ևս կլեյսուրի հորջորջում ստացավ։ [Մելիասը] գրավեց նաև Սյումպոսիոնը, որը նա դարձրեց տուրմարխություն։ Քրիստոսասեր տեր Կոստանդնի և նրա մայր Զոեի[56] ժամանակ Լիկանդոսն առաջին անգամ դարձավ զորավարություն. Լիկանդոսի առաջին զորավար նշանակվեց պատրիկ Մելիասը, որն այն ժամանակ Լիկանդոսի կլեյսուրարխ էր։ Մելիասը հռոմայեցիների կայսեր հանդեպ տածած հավատարմության, ապա նաև սարակինոսների դեմ կատարած բազմաթիվ քաջագործությունների համար հետագայում արժանացավ մագիստրոսի պատվին։

Պետք է գիտենալ, որ Աբարան[57] Սեբաստիայի բանակաթեմի կազմում գտնվող տուրմա էր, իսկ տեր Ռոմանոսի ժամանակ կլեյսուր դարձավ...

ԳԼՈՒԽ 51[1]

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՎԵՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴՐՈՄՈՆԻՈՆԸ, ԱՅԴ ԴՐՈՄՈՆԻՈՆԻ ՊՐՈՏՈԿԱՐԱՎԵՆԵՐԻ[2] ՄԱՍԻՆ ԵՎ ՖԻԱԼԱՅԻ ՊՐՈՏՈՍՊԱԹԱՐԻ[3] ՄԱՍԻՆ

...Երջանկահիշատակ և ամենաիմաստուն Լևոն կայսեր օրոք Ֆիալայի պրոտոսպաթարն էր Հովհաննեսը, որի մականունն էր Թալասսոն[4]։ Նրանից հետո՝ պրոտոսպաթար Պոդարոնը, իսկ նրանից էլ հետո պրոտոսպաթար Լևոն հայր[5], մանգլավիտ Արսեն պրոտոսպաթարի[6] հայրը։ Սրանք, այն է պրոտոսպաթար Պոդարոնը և Լևոն հայր նավատորմիղի դրունգար[7] պատրիկ Նասարի

պրոտելատներն[8] էին, իսկ քրիստոսասեր տեր Վասիլի օրոք հրաժարվեցին նավատորմիղում ծառայելուց և դարձան կայսեր ագրարիոնի պրոտելատներ։ Երջանկահիշատակ ամենաիմաստուն Լևոն կայսեր ժամանակ, երբ նա ստեղծեց դրոմոնիոնները, այդ մարդկանց արիությունը և ծովում ունեցած փորձառությունը նկատի առնելով, նրանց դարձրեց պրոտոկարավներ։

...Այնուհետև կայսրը Պոդարոնին և Լևոն հային նշանակեց կայսերական նավատորմիղի տոպոտերետեսներ[9]...

Վերոհիշյալ Լևոն հայը, հանգուցյալ մանգլավիտ պրոտոսպաթար Արսենի հայրը, վախճանվեց նավատորմիղի տոպոտերետեսի պաշտոնում, իսկ պրոտոսպաթար Պոդարոնը որոշ ժամանակ անց նշանակվեց Կիբիրեոտների բանակաթեմի[10] զորավար։

Պոդարոնը, նշանակվելով տոպոտերետես, Ֆիալեի պրոտոսպաթար դարձավ պրոտոսպաթար Թեոփիլակտոս Բիմբիլիդեսը, պրոտոսպաթար Հովհաննեսի, Թալասսոն մականվանյալի եղբորորդին, և այդ պաշտոնում մնաց քրիստոսասեր տեր Կոստանդին Ծիրանածինի առաջին մենիշխանության[11] ժամանակ մի քանի տարի...

ԳԼՈՒԽ 53

ԽԵՐՍՈՆԻ ԱՄՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ[12]

Հռոմում Դիոկլետիանոսի թագավորության, իսկ Խերսոնում Թեմիստոսի որդի Թեմիստոսի պսակակրության և իշխանության ժամանակ[13], Կրիսկոնորոսի որդի բոսպորացի Սավրոմատոսը[14] հավաքելով Մեոտիս լճի[15] շրջակայքում ապրող սարմատներին, արշավեց հռոմայեցիների դեմ, գրավեց լազերի երկիրը, պարտության մատնեց բնիկներին և հասավ մինչև Ալիս գետը։ Դիոկլետիանոս կայսրը իմանալով, որ լազերի երկիրը և Պոնտոսը գրավվել են, սարմատների դեմ զորք ուղարկեց։ Զորահրամանատարն էր տրիբուն Կոստասը։ Հասնելով Ալիս Կոստասը փորձեց թույլ չտալ սարմատներին անցնելու Ալիսը։ Բայց չկարողանալով նրանց հաղթահարել, մտածեց, որ սարմատներին միայն մեկ ճանապարհով կարելի է քշել, այն է՝ եթե Բոսպորոսի և Մեոտիս լճի մոտակայքում ապրող [խերսոնիտները] նրանց պատերազմ հայտարարեն և հարձակվեն [բոսպորացիների] ընտանիքների վրա։